600.0038.14.02.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 փետրվարի 2018 թվականի №38Ա
քաղ. Երևան

«ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՄԻ ՇԱՐՔ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի №289Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ, 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի №105Ա ԵՎ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի №291Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը, 78-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը և հաշվի առնելով «Էլեկտրաէներգետիկական համարարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի փետրվարի 1-ի №01-ՄՄ-12/65 և №01-ՄՄ-12/66 գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել.

1) «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2005 թվականի հունվարի 25-ին «Էլեկտրաէներգետիկական համարարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության «Էներգակապ» մասնաճյուղին տրամադրված ռադիոռելեային կապի գծերի շահագործման №ՌՌԳ/կ-143, №ՌՌԳ/կ-144 թույլտվությունները.

2) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 9-ի «№ՌՌԳ/կ-143, №ՌՌԳ/կ-144 թույլտվությունների գործողության ժամկետը երկարաձգելու և վերաձևակերպելու մասին» №289Ա որոշումը:

2. Հանել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝

1) 2009 թվականի մարտի 18-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված մի շարք թույլտվությունների գործողության ժամկետները երկարաձգելու մասին» №105Ա որոշմամբ երկարաձգված և նոր խմբագրությամբ շարադրված ռադիոհաճախա-կանությունների օգտագործման №0528 թույլտվությունից «, Տավուշի» բառը, «162,325ՄՀց, 167,525ՄՀց, 168,050ՄՀց» ռադիոհաճախականությունները, թույլտվության պայմանների 4-րդ կետի 1-ին, 4-րդ, 6-րդ, 8-րդ ենթակետերի աղյուսակների՝

ա. «Արաքս» մասնաճյուղ» գլխի 1-ին, 2-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ կետերը.

բ. «Ղարս» մասնաճյուղ» գլխի 1-ին, 12-րդ կետերը.

գ. «Գեղամա» մասնաճյուղ» գլխի 5-րդ, 8-րդ, 9-րդ կետերը.

դ. «Աղստև» մասնաճյուղ» գլուխը.

ե. «Էներգակապ» մասնաճյուղ» գլխի 2-րդ կետը.

զ. «Դեբետ» մասնաճյուղ» գլխի 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ, 8-րդ, 11-րդ, 12-րդ կետերը.

2) 2010 թվականի հունիսի 9-ի «Հայէներգո» Հայէներգակապին տրամադրված №ՌՌԳ-14, №ՌՌԳ-16, №ՌՌԳ-17, №ՌՌԳ-18, №ՌՌԳ-19, №ՌՌԳ-20 թույլտվությունները վերաձևակերպելու մասին» №291Ա որոշմամբ «Էլեկտրա-էներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական անվամբ վերաձևակերպված և նոր խմբագրությամբ շարադրված №0803 թույլտվության պայմանների 4 կետի 1-ին և 5-րդ ենթակետերի աղյուսակների 1-ին և 9-րդ տողերը:

3. Ընդունել ի գիտություն, որ «Էլեկտրաէներգետիկական համարարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերությունն իրավասու է.

1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ վերանայելու այն.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի փետրվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք.Երևան
14 փետրվարի 2018թ.